# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**14 հոկտեմբերի 2025 թվական, N 158-Ա**

**ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂ, 5-ՐԴ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ, 10/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ՝ 0.07773 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2) ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14-րդ կետի ա) ենթակետով, 38-րդ կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի սեփականության իրավունքի N 15052025-06-0082 վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, Օձուն գյուղ, 5-րդ փողոց, 4-րդ փակուղի, 10/1 հասցեում գտնվող, մանկական արվեստի դպրոցի շենքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած՝ 0.07773 հեկտար մակերեսով, կադաստրային 06-112-0053-0103 ծածկագրով հողամասը (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 15052025-06-0082) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Օձունի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հանձնարարել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կազմակերպել անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման աշխատանքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 5. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 6. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 7. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 8. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 9. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 10. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 11. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 12. | ՆԱՐԻՆԵ | ԹՈՐՈՍՅԱՆ | | | |
| 13. | ՍԱՄՎԵԼ | ԷԼԲԱԿՅԱՆ | | | |
| 14. | ԱՐԱՄԱՅԻՍ | ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ., հոկտեմբերի 14,
Լոռու մարզ, ք. Ալավերդի